ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ. Մ. ՄԻԱՆԱՐԵԱՆՑ

—

Մի տիրայր լուր է հասել մեզ Ս. Պետերբուրգից:

Ապրիլի 5-ին վախճանվեցաւ մայոր Մ. Միանասարեանց: Հանգուցեալը շատ ծեր մարդ չէր: Նա ծնվեցաւ 1830 թուին, ուրեմն այժմ յիսուն տարեկան էր: Դուցէ նա գարձեալ երկար ապրէր, եթէ Ս. Պետերբուրգի կլիման պատճառ չը լինէր նրա յանկարծակի մահվան: Մ. Միանասարեանց յայտնի էր որպէս եռանդուն, տոկուն աշխատող: Նրա աշխատութիւնները Հայոց գրականութեան համար մի յարգելի անուն կը թողնեն հանգուցեալին մայրենի նոր գրականութեան զարգացման պատմութեան մէջ: Ուժ յայտնի չեն Միանասարեանցի այլ և այլ հրատարակութիւնները, Վայելչագրութեան տետրակները, նրա «Հայկեան Քնար» երգարանը, նրա «Ցուցակը» Արևելքին վերաբերեալ գրքերի: Մենք անձամբ էլ ծանոթ էինք Միանասարեանցի հետ և կարող ենք վկայել որ հանգուցեալի ջերմ ազգասիրութիւնը, նրա սիրող սիրտը և վառվռուն բնաւորութիւնը, նրա տաղանդը դէպի ամէն բան ինչ որ անարդար, սուտ, ստոր, կեղծ և վնասակար էր,—սիրելի էին անում նրան իր բոլոր բարեկամներին: Միանասարեանը իր չորս կողմ անարդարութիւն, կեղտ և չարամտութիւն տեսնելով, բոլորովին առանձնացած կենաք էր վարում: Կուլ ամրողջ հասարակութեան դէմ, անընդհատ մարդիկ կեղտը և կեղծաւորութիւնը, ատել ժամանակակիցներին և գործել ապագայի համար,—ա՛յ շատ ծանր կոչում է.... Այդ տեսակ մարդիկ երկար ապրել չեն կարող:

Ամրողջ կեանքը բացարձակ և անինամ կրուել հասարակութեան կեղտի դէմ՝ էժան չէ նստում:

Հանգիստ քեզ հին բարեկամ, հանգիստ քեզ մարի ազնիւ, թէև համեստ գինուոր:

Գրիգոր Աթթունի

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

—

1881 թուի օգոստոսին Թիֆլիսի մէջ լինելու հնագիտական ժողովի համար պատրաստական աշխատանքներ՝ կոմս Ա. Ս. Ուվարովի եռանդուն գործունէութեան շնորհիւ շարունակվում են: Ինչպէս յայտնի է, Նարին Բարձրութիւն կոմսուհուն Փոխարքան պատրաստական աշխատանքների համար բարի հաճել տալ 15,000 ր.: Մենք լսել ենք, գրում է «Русскій Курьеръ» լրագիրը, որի մէջ տպված է այս յօդուածը, թէ ի նպաստ ուսնենալով հնագիտական ժողովածուների մեծ քանակութիւնը, որը մասամբ հաւաքված է արդէն և մասամբ պէտք է հաւաքվի և որը պէտք է դնվի Թիֆլիսի թանգարանի մէջ, հարկաւոր եղաւ թանգարանի սուրբ մեծացնել և այդ նպատակի համար Նորին Բարձրութիւնը տուել է 40,000 բուբլի: Անցեալ տարի հնագիտական հետախուզութիւնները Կովկասի մէջ կատարում էին ԱռոմՕվիչ, Բերենշտամ և Ֆոլիակով պրոֆէսսորները: Պրոֆէսսոր ԱռոմՕվիչ հետախուզութիւններ էր անում հիւսիսային Կովկասում, Վլադիկավկասի և Մոզդոկի մէջ եղած տարածութեան վրա: Նրան ազնվեցաւ շատ հետաքրքիր տեղեկութիւններ և տպագրեցին հաւաքել այդ երկրի հին ազգաբնակութեան կուլտուրայի մասին: Պ. Բերենշտամ հետախուզեց Կովկասի հեւսիսարևմտեան մասը (Սուրանգայա Օբլաստ) և այնպիսի տարաներ գտաւ, որոնք Ակրեթացոց ժամանակներին են վերաբերվում: Պ. Ֆոլիակով հետախուզեց Անդրկովկասի բազմաթիւ այրերը, դլխաւորապէս Արարատի ստորոտները, որոնց մէջ շատ քիչ հետաքրքրութիւններ ու տպագրեցին հին քարէ գարի: Ինքը կոմս Ուվարով մի քանի տեղեր փորել տուեց ի միջի այլոց Սամիտարէ գերեզմանատունը Մցխեթի մօտ և Կազրեկի շրջակայքում: (Սանիտում): Այդ հետախուզութիւնների հաշիւները արդէն կազմված են, իսկ Ֆոլիակովի հաշիւը ապրիլում է: Նիստ ամսու Կովկասի մէջ հետախուզութիւններ կանեն մի քանի անձինք: Ի միջի այլոց պ. Բերենշտամ կը շարունակէ իր հետախուզութիւնները Կուրանի Նահանգում, պ. Սիսոեվիչ Նոյն Նպատակով կերթայ Հայոց հին մայրաքաղաք Արմաւիր, որ Քրիստոսի Ծնունդից 2,000 տարի առաջ է հիմնված, իսկ պ. Վ. Կոֆտիկովի մտադիր է պալէՕտոլոգիական ընտրութիւններ անել: Բացի այդ գիտաստութիւն կայ հետախուզել Դերբենտի շրջակայքները և Հայաստանի մի քանի տեղերը:

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

27 մարտի

Այստեղ թանգութիւնը սաստկացաւ, հացը հասաւ 5 բուբլու և գրանից էլ բարձր: Երէկ ալիւրի պուդը ծախվեցաւ 5 ր., 40 կ.:

Հին Նախիջևանի գաւառապետի օգնականը գիւղերում շրջագայելով յորդորում է ժողովրդին նուիրատուութիւններ անել, գումար կազմել և օգնել, պահպանել չքաւորներին:

Թող թող տրուի մեզ յայտնել, որ այս մասնաւորների աչխատութիւնը անզօր է, առանց կառավարութեան ձեռնհասութեան: Պարսկաստանից ցորեն ստանալու ամենայն յոյս ի զուր անցաւ, գաւառումն էլ եթէ ցորեն կամ ալիւր կայ, անկարելի անձանց մօտ պէտք է լինի, որոնք երկիւղից դուրս չեն բերում վաճառելու: Միակ յոյսը Թիֆլիսն է, բայց այդտեղից էլ հասցնելն այժմ համարեա անկարելի է դարձած, թանգութեան և անասունների ճարակի պակասութեան երկիւղից ոչ ապրդներ և ոչ ուղտապաններ չեն յանձն առնում տանել պուդը 2 ր. 50 կոպէկի վարձով էլ, այլ և պէտք է ասած որ յանձն առողներին էլ դժուար է հաւատալ թէ նրանք իրկութիւնամբ տեղ կը հասցնեն ընդունած ցորեն կամ ալիւրը, ինչպէս որ արդէն քանիցս տեսնվեցաւ մօտ ժամանակներումս:

Ահա այժմ, այս կրիտիկական միջոցում մեր բոլոր յոյսը կենդանացած է մրմայն բարեխնամ կառավարութեան վրա: Լիայոյս ենք, որ ժողովրդեան այս անել վիճակի մասին տեղեկանալով կառավարութիւնը անմիջապէս ձեռք կառնէ հարկաւոր միջոցները անօգնական ժողովրդին պաշար հասցնելու և թանգութեան հետզհետէ սաստկանալը խափանելու: Այդ տեսակ միջոցներ կարող են լինել թէ Պարսկաստանից ցորեն անցկացնելու համար թոյլատուութիւն պահանջելը, թէ տէրութեան ամբարանոցներից ցորեն և ալիւր բաժանելը և թէ Թիֆլիսից հասցնելու համար ժողովրդեան նպաստելը: Ցուսամք որ բարեխնամ կառավարութիւնը զանցառութեան չի տայ և այն տեսակ միջոցներ, որոնցով կարելի լիներ եկող տարի ևս այսոեսակ թանգութիւն պատահելու առաջն առնել:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

Մարտի 10-ին

Արդէն յայտնի է մեզ և ամենին այժմեան սարսափելի թանգութիւնը: Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և մեր կողմերը նոյն թանգութիւն կայ, սակայն աւելի քսանմեկի, զարուելի է տեսնել Մասիսի ստորոտում բնակվող «Գեալմուրդլու» քրդերի այժմեան անպատմելի նեղութիւնը ու տառապանքը սովի ձեռքից: Ես ինքս աչքով տեսայ նրանց խմբովին պանդուխտված կերպարանքով մեր Աւրմարլուի հայերի դռները պատելու և հաց մուրալու.... Քանի որ մարտ ամսի սկզբին ձիւնն ու բուքը չէր ծածկել երկրի երեսը, քանի որ եղանակը մի փոքր մեղմացած բացված էր, յիշեալ քրդերի բազմութեան մեծագոյն մասը Մասիսի ստորոտի չամրի (սաղ) եղեգների արմատը հանելով, ուտում և ապրում էին, իսկ երբ նորից ձմեռը և ձիւնը սաստկացաւ, ողջ գեղերը ծածկեց, նոքա (այսինքն քրդերը) ստիպվեցան իրանց յոյսը դնել հայերի վրա, հայերից յուսալով ապրել: Ինչպէս նրանց ծանօթ մարդիկը պատմում են, այդ քրդերն էին Հին-Բայազէտի հայերի տան կայքը, ապրանքը յափշտակում տանում, նոյն քրդերն էին նրանց մարդիկը սպանում, կոտորում, և նրանց անմեղ երեխաները վեր առնում ձգում տների վառված կրակի մէջ.... Ցաշրուանցի Մանուկան Աւագ անձը պատմում էր նոյն սոսկալի քրդերի բերանացի հրապարակաւ խոստովանութիւնը, որոնք խղճահարվելով իրանց անզգոյն արարմանց վրա, ասում էին, «մենք որ մեր ձեռքով չատերին հայերից (Բայազիթում) սաղ սաղ քերթում, սպանում էինք, մենք որ նրանց անմեղ երեխաները բռնում գցում էինք կրակի մէջ... մենք որ չատ ծծմբի կնոջ ծիծը կտրելով, թողնում էինք ոզորմելի երեխաներին քաղցած, նրանց արդար Աստուածը մեզ այս օրին, այս սովին ռաստ բերեց... ի սէր Աստուծոյ մենք արիւք, դուք մի արէք, մենք մեռնում ենք սովից, մեզ մի կտոր հաց տուէք, մեր կեանքը փրկեցէք...»: Բայց էլի մեր գթասիրտ հայերը խղճալով, մի կտոր հաց սիրով տալիս են իրանց մխեղնենաւոր արիւնարբու թշնամի քրդերին, դարձեալ մեր հայերը պահում են նրանց: Ինչպէս ասակ ես հաղորդել եմ ձեզ, ամեն օր, ամեն բոպէ քրդերի քաղցած կարաւանը պակաս չէ մեզանում: Մի պապիրոս ծխելու միջոցում տասնից աւելի սոված քրդեր գալիս առաջին կանգնում, վիզը ծռում և մի կտոր հաց խնդրում թէ որ ասեմ մարդ չատ անգամ դառնացած կերպարանք է ցոյց տալիս այդ խուռն սովալուկ բազմութեան, մի մեղադրէք մեզ, բնականաբար ամեն բանի չափազանցութիւնը ճանձրութիւն, զզուանք է պատճառում մարդու: Այժմ այսպէս պատահել է մեզ, դեռ մէկին ճանապարհ չը ձգած, տեսնում ես միւսը, և անթիւ միւս եկաւորներ հարկադրում են մարդու չատ անգամ բացասել: Մէկ օր նստած տեսնեակիս դրան առաջ, արևկողմն (Աստուած արևկող համարի) կարդում էի «Մշակ» լրագիրը, ինչպէս չատերը, տեսնեմ մի յարգանդամ քարոյ մի մեծ կարպետ ուսին գցած, մտնում ինձ, ։ առ այս կարպետը և որքան կամիր է ալիւր կամ կորեկ տուր սորա փոխարէն, երեխայքս սովից մեռնում են»: Հարցրի նորա որտեղացի լինելը, նա ասաց որ ինքը այժմ բնակվում է Մասիսի թիկանց վրա «Զօրղանա» կոչված անտառակի մօտ: Լրը ես մանրամասնաբար կամեցայ նրանց այժմեան դրութիւնը հարցնել, այդ

թող, գինի և ուրիշ այսպիսի մթերքներ պատրաստելու համար: Ներքնատան յատակը պատած էր սալերով: Ներքնոյն մտնելու և թոքարարեց այդ սալերից երկուսը: Նրանց տակում յայտնվեցաւ երկաթի փոքրիկ դուռ, որ հորիզոնական դիրքով փակում էր գաղտնի պահարանի մուտքը: Ներքնոյն հանեց իր գրպանից մի բանալի, դրեց իր պատշաճաւոր տեղում, մի քանի անգամ պտտեցրուց, և երկաթի դուռը ինքնիրան բարձրացաւ: Այժմ նրանց առջև բաց էր ստորերկրեայ վիրապի բերանը: Նեղ սանդուղաներով նրանք իջան ցած: Վիրապի մթին դատարկութեան մէջ ոչինչ չէր կարելի տեսնել: Խնամ օդը խեղդելու չափ ծանր էր: Խուրջինը դնելով այնտեղ, նրանք չուռով դուրս եկան: Ներքնոյն կրկին կողպեց երկաթի դուռը, կրկին սալերը դրեց իրանց առաջվայ տեղում, և այժմ գնացար էր նկատել, որ նրանց տակում կար մի ստորերկրեայ պահարան:

—Ցուր ինձ բանալին, ասաց Էֆէնդին,—ես կը պահեմ: Այժմ դու ինձանից աւելի հաւատարիմ մարդ չունես:

Ներքնոյն առանց երկար մտածելու բանալին տուեց նրան: Երկիւղը այն ասահման պաշարել էր նրան, որ ամեն առաջարկութիւն Էֆէնդու կողմից պատրաստ էր ընդունել:

—Ես շատ բաներ ունեմ քեզ հետ խօսելու, տանուտէր խաչո, բայց ժամանակը կարճ է, գուցէ չուռով կը յայտնվեն խուզարկուները, ասաց նա չտապելով:—Ա՛ռ այժմ մի քանի խրատներ կը տամ քեզ լսիր. ոչ ոք չը պիտի գիտնայ, որ ես քեզ հետ տեսնվել եմ. մեր բոլոր կարգադրութիւնները պէտք է գաղտնի մնան մինչև անգամ քո որդիներից և քո բոլոր տանեցիներից: Երբ կը յայտնվեն խուզարկուները, դու աշխատիր, որքան կարելի է, աներկիւղ, անվրդով և միամիտ ձևանալ: Թող ասեն որ ուզում են պտտեն, մանգան, վտանգաւոր բանը մենք արդէն թաղցրինք, ինքը ստատանն էլ չի կարող գտնել: Մի՛ուրցիր, թէ այն ուղղուցի փղոցը քո տանը եղել է, միայն սատ, որ դու նրան չես ճանաչում, և նրա ինչ նպատակով այս կողմերում թափառելը ոչ քեզ և ոչ քո որդիներին յայտնի չէ:

Վերջացնելով իր պատուէրները, Էֆէնդին դուրս եկաւ ներքնատնից:

—Հիմայ ցոյց տուեցէք ինձ մի ուրիշ ճանապարհ, որ ես հեռանամ, ասաց նա իր չուրջը նայելով:—Ես պէտք է աչքատեմ, որ ինձ չը տեսնեն այստեղից դուրս գալու ժամանակ:

Ներքնոյն տարաւ նրան դէպի տան ետեի դուռը, որ ծառայում էր անասունների երթևեկութեան համար:

—Այժմ մնացէք բարեաւ, ես կրկին կը վերադառնամ, երբ խուզարկուները եկած և իրանց գործողութիւնը վերջացրած կը լինեն, նոր նրանց մի կերպով կը հանգստացնեմ, միամիտ կաց:

Էֆէնդին հեռացաւ. Ճանապարհին նա մի քանի անգամ կրկնեց իր մտքումը այդ խօսքերը. «Հիմայ հոգիդ իմ ձեռքումն է, տանուտէր խաչո, ինչ որ ուզեմ, կանեմ»...

Կէսօրից մի ժամ անցել էր: Վարդանը, Հայրապետը և Աղան տակաւին չէին վերադարձել: Ներքնոյնը միայն որդիները դաշտումը գործում էին: Կնիկները զբաղված էին իրանց անասնութիւնով, որովհետև դաշտում աշխատողների համար պէտք էր ճաշ ուղարկել: Գիւղացիները ըստ մեծի մասին ճաշը ուտում են դրսում, և գիւղը ընթրիքի ժամանակ միայն գալիս են տուն: Դեռ ոչ ոք չը գիտէր, թէ ինչ էր պատահել:

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

27 մարտի

Այստեղ թանգութիւնը սաստկացաւ, հացը հասաւ 5 բուբլու և գրանից էլ բարձր: Երէկ ալիւրի պուդը ծախվեցաւ 5 ր., 40 կ.:

Հին Նախիջևանի գաւառապետի օգնականը գիւղերում շրջագայելով յորդորում է ժողովրդին նուիրատուութիւններ անել, գումար կազմել և օգնել, պահպանել չքաւորներին:

Թող թող տրուի մեզ յայտնել, որ այս մասնաւորների աչխատութիւնը անզօր է, առանց կառավարութեան ձեռնհասութեան: Պարսկաստանից ցորեն ստանալու ամենայն յոյս ի զուր անցաւ, գաւառումն էլ եթէ ցորեն կամ ալիւր կայ, անկարելի անձանց մօտ պէտք է լինի, որոնք երկիւղից դուրս չեն բերում վաճառելու: Միակ յոյսը Թիֆլիսն է, բայց այդտեղից էլ հասցնելն այժմ համարեա անկարելի է դարձած, թանգութեան և անասունների ճարակի պակասութեան երկիւղից ոչ ապրդներ և ոչ ուղտապաններ չեն յանձն առնում տանել պուդը 2 ր. 50 կոպէկի վարձով էլ, այլ և պէտք է ասած որ յանձն առողներին էլ դժուար է հաւատալ թէ նրանք իրկութիւնամբ տեղ կը հասցնեն ընդունած ցորեն կամ ալիւրը, ինչպէս որ արդէն քանիցս տեսնվեցաւ մօտ ժամանակներումս:

Ահա այժմ, այս կրիտիկական միջոցում մեր բոլոր յոյսը կենդանացած է մրմայն բարեխնամ կառավարութեան վրա: Լիայոյս ենք, որ ժողովրդեան այս անել վիճակի մասին տեղեկանալով կառավարութիւնը անմիջապէս ձեռք կառնէ հարկաւոր միջոցները անօգնական ժողովրդին պաշար հասցնելու և թանգութեան հետզհետէ սաստկանալը խափանելու: Այդ տեսակ միջոցներ կարող են լինել թէ Պարսկաստանից ցորեն անցկացնելու համար թոյլատուութիւն պահանջելը, թէ տէրութեան ամբարանոցներից ցորեն և ալիւր բաժանելը և թէ Թիֆլիսից հասցնելու համար ժողովրդեան նպաստելը: Ցուսամք որ բարեխնամ կառավարութիւնը զանցառութեան չի տայ և այն տեսակ միջոցներ, որոնցով կարելի լիներ եկող տարի ևս այսոեսակ թանգութիւն պատահելու առաջն առնել:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

Մարտի 10-ին

Արդէն յայտնի է մեզ և ամենին այժմեան սարսափելի թանգութիւնը: Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և մեր կողմերը նոյն թանգութիւն կայ, սակայն աւելի քսանմեկի, զարուելի է տեսնել Մասիսի ստորոտում բնակվող «Գեալմուրդլու» քրդերի այժմեան անպատմելի նեղութիւնը ու տառապանքը սովի ձեռքից: Ես ինքս աչքով տեսայ նրանց խմբովին պանդուխտված կերպարանքով մեր Աւրմարլուի հայերի դռները պատելու և հաց մուրալու.... Քանի որ մարտ ամսի սկզբին ձիւնն ու բուքը չէր ծածկել երկրի երեսը, քանի որ եղանակը մի փոքր մեղմացած բացված էր, յիշեալ քրդերի բազմութեան մեծագոյն մասը Մասիսի ստորոտի չամրի (սաղ) եղեգների արմատը հանելով, ուտում և ապրում էին, իսկ երբ նորից ձմեռը և ձիւնը սաստկացաւ, ողջ գեղերը ծածկեց, նոքա (այսինքն քրդերը) ստիպվեցան իրանց յոյսը դնել հայերի վրա, հայերից յուսալով ապրել: Ինչպէս նրանց ծանօթ մարդիկը պատմում են, այդ քրդերն էին Հին-Բայազէտի հայերի տան կայքը, ապրանքը յափշտակում տանում, նոյն քրդերն էին նրանց մարդիկը սպանում, կոտորում, և նրանց անմեղ երեխաները վեր առնում ձգում տների վառված կրակի մէջ.... Ցաշրուանցի Մանուկան Աւագ անձը պատմում էր նոյն սոսկալի քրդերի բերանացի հրապարակաւ խոստովանութիւնը, որոնք խղճահարվելով իրանց անզգոյն արարմանց վրա, ասում էին, «մենք որ մեր ձեռքով չատերին հայերից (Բայազիթում) սաղ սաղ քերթում, սպանում էինք, մենք որ նրանց անմեղ երեխաները բռնում գցում էինք կրակի մէջ... մենք որ չատ ծծմբի կնոջ ծիծը կտրելով, թողնում էինք ոզորմելի երեխաներին քաղցած, նրանց արդար Աստուածը մեզ այս օրին, այս սովին ռաստ բերեց... ի սէր Աստուծոյ մենք արիւք, դուք մի արէք, մենք մեռնում ենք սովից, մեզ մի կտոր հաց տուէք, մեր կեանքը փրկեցէք...»: Բայց էլի մեր գթասիրտ հայերը խղճալով, մի կտոր հաց սիրով տալիս են իրանց մխեղնենաւոր արիւնարբու թշնամի քրդերին, դարձեալ մեր հայերը պահում են նրանց: Ինչպէս ասակ ես հաղորդել եմ ձեզ, ամեն օր, ամեն բոպէ քրդերի քաղցած կարաւանը պակաս չէ մեզանում: Մի պապիրոս ծխելու միջոցում տասնից աւելի սոված քրդեր գալիս առաջին կանգնում, վիզը ծռում և մի կտոր հաց խնդրում թէ որ ասեմ մարդ չատ անգամ դառնացած կերպարանք է ցոյց տալիս այդ խուռն սովալուկ բազմութեան, մի մեղադրէք մեզ, բնականաբար ամեն բանի չափազանցութիւնը ճանձրութիւն, զզուանք է պատճառում մարդու: Այժմ այսպէս պատահել է մեզ, դեռ մէկին ճանապարհ չը ձգած, տեսնում ես միւսը, և անթիւ միւս եկաւորներ հարկադրում են մարդու չատ անգամ բացասել: Մէկ օր նստած տեսնեակիս դրան առաջ, արևկողմն (Աստուած արևկող համարի) կարդում էի «Մշակ» լրագիրը, ինչպէս չատերը, տեսնեմ մի յարգանդամ քարոյ մի մեծ կարպետ ուսին գցած, մտնում ինձ, ։ առ այս կարպետը և որքան կամիր է ալիւր կամ կորեկ տուր սորա փոխարէն, երեխայքս սովից մեռնում են»: Հարցրի նորա որտեղացի լինելը, նա ասաց որ ինքը այժմ բնակվում է Մասիսի թիկանց վրա «Զօրղանա» կոչված անտառակի մօտ: Լրը ես մանրամասնաբար կամեցայ նրանց այժմեան դրութիւնը հարցնել, այդ

խուզարկութիւնը վերջացնելուց յետոյ յիսնապետը սկսեց իր հարցու փորձը.

—Այս տանը բնակվում էր մի երիտասարդ Միքայէլ Դաւուշկեանն անունով:

—Նա մի քանի գիշեր միայն մնաց այստեղ, պատասխանեց ծերունին:

—Դուք առաջուց ճանաչում էիք նրան:

—Առաջին անգամն էր, որ տեսայ նրան:

—Ուրեմն ինչու ընդունեցիք ձեր տնում:

—Ես այս գիւղի տանուտէրն եմ. Ձեզ յայտնի է մեր երկրի սովորութիւնը. տանուտէրի տունը մի տեսակ քարվանսարայ է, մի տեսակ հիւրանոց է, ուր ամեն մի օտարական, ամեն մի անծանօթ մարդ օթևան է գտնում. Ինչ կարող եմ գիտենալ, թէ ով է գալիս, կամ ով է գնում:

—Դա չը թողնց այստեղ մի բան:

—Ոչինչ չը թողնց:

—Դուք չը հասկացաք, թէ ինչ դիտաւորութեամբ էր չրջում նա այս կողմերում:

—Դա մեզ ոչինչ չը յայտնեց: Այսքանը գիտեմ, որ նա վարժապետ էր:

—Դուք չը գիտէք, թէ նա ում հետ էր տեսնվում, կամ ում հետ էր խորհրդակցում:

—Վարժապետը ամեն մարդու հետ տեսնվում է աշակերտներ գտնելու համար:

—Այժմ գիտէք, նա որտեղ է:

—Չը գիտեմ:

—կպանաւորված է:

—Աւելի լաւ, եթէ վատ մարդ էր:

Այդ միջոցին զարկեցին տան դռան մուրճը:

—Ոչ ոքի ներս չը թողնել, հրամայեց յիսնապետը:

Շտապ յայտնեց, թէ Թոմաս Էֆէնդին է:

—Նա կարող է գալ: